

տակին, վերանորոգելու համար մեր ուժերը, ամրացնելու մեր տեղադիր փարոշներ մեզի կենսունակությունն տուող գաղափարականներուն, Կրօնքի և Ազգութեան ողջամիտ սկզբունքներուն, ոչ տարանջատ՝ այլ միասնոր գոգոնքեանը ներշնչումի այդ երկու աղբիւրներուն, որոնց ձշմարիտ փարոսպետությունը ինքն Մեծն Մխիթար եղաւ որ աշակերտ առաջին անգամ:

Առաջիկայ 1949-ի Ապրիլին, ծաղիկներու բուսումնաւէտ ամսոյն, 200-ամեայ Յոբելեանն է այդ մեծ Հայուն մահուան:

Մխիթարեան Միաբանութիւնը կու տայ այժմէն ազդր այդ նշանակալից Յիշատակին, որ անտարակոյս ազգային մարտնչին և գաղութային կեդրոններու մէջ պիտի գտնէ իր խանդավառ արձագանգը: Քաղաքական անորոշ կացութեան մը երկիւղը կը տագնապէ ասկայն մեր միտքը, որ մի գոցէ աշխարհ կրկին ահաշուրազոյն պատերազմի մը հրդեհով յեղաշրջոյն, փտանգելով մեր ծրագիրը: Եթէ վերահաս համաշխարհային տխուր պարագաներ չփրկուին մեզ, պիտի ունենանք հոգեկան անհոշ մխիթարութիւնը վայելելու Մխիթարի մեծ հոգիէն ձառագայթող լոյսին բոլոր գեղեցկութիւնը 1949-ի յոբելեանական տարւոյն մէջ:

Երբ 1749-ի Ապրիլ 27-ին Ս. Ղազարոս նորակերտ մեկնատանին մէջ, - յետ տառապանքի մրոշրը ցլատակ քամելու ի սեր իր գաղափարական իրագործման, յետ իր կրանիդեայ կամքին գործքեանը զգետներու ամէն խոչընդոտ, և յետ դներու վանքին անտառան հիւրերը վեներտիկի մը պէս գեղարուեստական քաղաքի մէկ անկիւնը, որ այսօր հայուն և օտարին ողջադրութեան և գոչգոչութեան առարկայ է, - Մխիթար կը փակէր աչքերը անմահներու լոյսին մէջ, կատարելով նախախնամութեան իրեն յանձնուած գործը:

Այդ մեծ Հօր և աստուածաբան Վարդապետին զաւակները հպարտ են այսօր իրմով, անոնք՝ հաշտարիւմ իրմէ ժառանգած կրօնական ոչ ազգային սկզբունքներուն, շարունակած են և պիտի շարունակեն քաղաք միշտ անոր մտքին ոչ սրտին գծած ուղիէն, ինչ ձեռով ալ ժամանակը և կամ մարդիկ յարուցանեն դժուարութիւններ, համոզուած՝ թէ այդ գործը որ աշակերտած է իրենց՝ Աստուծոյ գործն է, ուղղուած մեր տառապեալ ազգին հոգեւոր ոչ մոռաւոր բարիքին և ցեղային մշտնջենաշարունակին: Մեզի հետ, գիտենք թէ բովանդակ Ազգն ալ, կը պարծի իր մեծ Զաւակին փառքովը, որ բերած է անհոշ ծառայութիւններ Հայ Եկեղեցոյն և Հայ Մշակոյթին, պայքարելով մեր կենսունակութեան դաշաձանող ահաշուր խաւարի մը տիրապետութեան դէմ:

Անտահման ոգրախոշքեանը է ուրեմն, որ հոս կոշտանք ազդր այդ յոբելեանական տօնախմբութեան, հետագային թողով հաղորդել հարկ եղած մանրամասնութիւնները:

ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ



40 Գ-71

ԱՌԼՈՒՍԱԾԻՆՆ ՄԻԹԱՐ

Անմահներու դաբիրային, ով լուսածին
Դուռն Մխիթար, Յեղիս Ոգին յաւերժական,
Հայ հանճարի սաւառնաթել հսկան անդին.
Դարերն անցեալ ու ապագայ երնեկ կու տան
Քու գարունն որ՝ տալով ճակտիդ համբոյրը մօր
Ծընաւ ըզքեզ լոյսի նրման ու փառաւոր:

Ինչ արշալոյս էր որ պատուեց յանկարծաթափ,
Հորիզոնի քողը մըթին, ու հեղեղեց
Ովկեան մը վառ երանգներու, եռուն, հրատապ:
Անըջական ինչ տեսիլներ ուրուագւրեց,
Որոնց մէջէն Ապագայի գէմբը պայծառ
Արեւու պէս գըծեց ուղին իր անմոլար:

Մեր խաւարած բերերն ահա, ծարաւ լոյսի,
Դարձան քեզի նայիլ անթարթ, ըզմայլական:
Ու նախ մեղմիկ, ապա ուժգին ճաճանչդ ոսկի
Իջաւ հանգիլ մեր հողին վրայ կորդ ու խոպան,
Եւ կեանք մը նոր ըսկըսաւ հոն ծիւ արձակել,
Առած լոյսեզ լոյս, շունչէզ շունչ երկնավայել:

Երկրէ երկիր ու ծովերէ ծով անցնելով՝
Երբ չափեցիր հորիզոններ մըտածումի,
Եւ խորացար հոգւոյդ ալքին մէջ խոկումով՝
Գըտար զԱստուած, կըրօնք ու սէր հայրենիքի,
Դուռն այն օրէն որպէս արծիւ մը սըրաւտես
Տեսար գործիդ սահմանները լոյսն ու անտես:

5440-Ա.Բ.

Ահա թառանչ, ահա և լաց հոգիներու,
Որոնց քայլերը կը հըպին կոյր անդունդին,
Ուր կը հսկէ դարանակալ, որպէս ուրու,
Հափափիչ մահն և խուլ կորուստը խաւարին:
Տըգիտութիւն, անկում, կապանք՝ հայու բաժին,
Նայուածքիդ տակ լուսաճաճանչ կը փըշրըւին:

Անցար ձորէ ձոր, լեռնէ լեռ զերդ առաքեալ,
Շրթունքիդ վրայ ծաղկեցնելով ժըպիտ ու սէր,
Որպէս ձեռքիդ ցուպ՝ լոյսի դօշն աստուածընկալ,
Որուն վերեւ երկինք մ'ամբողջ կը ծածանէր,
Եւ աչքերէդ, որ զոյգ հնոցն էր վըճիտ կեանքի,
Հոգիդ մեղի կը բաշխէիր անչափելի:

Ճակտիդ ներքեւ, որ համբուրուած մեծ Մաշթոցէն,
Ճառագայթեց ջահոյն անշէջ Գաղափարի,
Ծընունդ առին հայկեան գիրեր՝ մեր փառքն անդէն,
Եւ դու եղար ճարտարապետ մշտաբարի՝
Որ ժողովուրդ մը կը կանգնէ գերբուկներէն՝
Ձերդ ոսկորներ կեանքի կոշով մեծ Մարգարէն:

Ո՛չ, գիտաւոր սը լոկ չեղար դուն վաղափուր,
Այլ արեգակն յաւետահրաշ մեր երկնքին,
Որ շուրջդ առած գօտի՝ որդեքըդ բազմահոյլ
Իբր աստղերու պարն ազնուական ու վեհածին,
Կը հսկես միշտ քու տաճարին մեծակառոյց,
Անձրեւելով աստուածօրէն շընորհք ու լոյս:

ԱՐՄԱՒԻՐԵԱՆ

Ս. ԵՓՐԵՄ ԵՒ ԻՐ ՃԱՌԸ

ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Ի՞նչպէս չապշի՝ չհիանայ մարդ, երբ
մտածէ որ Միջագետքի մէջ ծնած ասորի
մը, հեթանոս քուրմի զաւակ, — տասնեւ-
ութ տարեկան հասակին հաղիւ քրիստո-
նեայ դարձած, երբե՛ք բարձրագոյն վար-
ժարաններ չյաճախած, ո՛չ Աթէնք, ո՛չ Ա-
ղեքսանդրիա եւ ո՛չ ալ Անտիոք, — անա-
պատներու եւ քարայրներու մէջ անցու-
ցած բոլոր կեանքը, լոկ սարկաւազ մը,
ո՛չ միայն ասորի Եկեղեցւոյն գերագոյն
Վարդապետը կ'ըլլայ, այլ նաեւ բովան-
դակ քրիստոնեայ Եկեղեցւոյն մեծագոյն
Վարդապետներուն կարգը կը դասուի: Եւ
ան՝ ի՞նչ չէր արդէն: Խորունկ աստուա-
ծաբան մը, հզօր պերճախօս մը, անպար-
տելի ջատագով մը հաւատքին, քերթող
մը, երաժիշտ մը, գերադանց սուրբ մը,
հայր մը: Ահա՛ Ս. Եփրեմ Խուրին ասորին:

Այս մեծ ու անմահ Վարդապետը ծնաւ
Մծրին քաղաքը 306-307 թուականին, երբ
հաղիւ տարի՛ մը կ'ընէր՝ որ Կոստանդիա-
նոս կայսերական դահլը բարձրացած էր:
Անոր անուն դրուեցաւ Եփրեմ, որ անե-
ցուն կամ բեղմնաւոր կը նշանակէ, ինչ-
պէս եղաւ իրապէս իր անխոնջ առաքե-
լութեամբ ու գրական գործերով: Ան՝ մա-
նուկ հասակէն նոգկանք զգալով հեթանոս
կրօնքէն ու հմայուած Քրիստոսի սուրբ եւ
լուսաւոր հաւատքէն, թողուց ծնողքը,
տունը ու ամէն բան, վաղեց քաղաքին ա-
ռաջնորդ Ս. Յակոբ Մծրնացւոյն գիրկը,
որուն խնամքներով եղաւ ամենաջերմ
քրիստոնեայ մը: Ի բնէ նիհար, վտիտ ու
տկարակաղմ, դոհ կ'ըլլար կտոր մը դա-
րեհաց ու քիչ մը բանջարեղէն կամ ընդե-
ղէն ուտելով, սոսկ ջուր խմելով ու հա-

ղիւ քանի մը ժամ հանգչելով գիշերը գետ-
նախշտի: Կարելի է երեւակայել թէ ի՞նչ
դարձաւ, երբ տարիքն առած գործի ըս-
կըսաւ, աւելի եւս խոտացնելով օրէ օր իր
ճղնութիւնները: Դէմքը չափազանց լուրջ,
գունաթափ, անծիծաղ, գլուխը ճաղատ ու
անմօրուս, ցնցոտի գրգռելով մը փաթա-
թած մարմինը: Այսպէս կը ներկայացնէ
զինքը իր կենսագիրը: Եւ սակայն, այն
ազազուն մարմնոյն մէջ ի՞նչ կորովի հոգի
մը կար, ի՞նչ մեծախոհ միտք մը, ի՞նչ
գիւցաղնական սիրտ մը: Ան ապրեցաւ ու
գործեց քաղաքական ու կրօնական փոթոր-
կալից չըջանի մը մէջ, երբ իր ծննդավայր
Մծրին քաղաքը, գրեթէ սահմանակից
պարսիկ աշխարհին, յաճախ ենթակայ Սա-
սանեան արքայից յարձակումներուն ու
խոթոթութեանց, երկու անգամ (338 ու
346 տարիներուն) պաշարուեցաւ Շապուհ
Բ. արքային անհամար զօրքերէն, եւ միայն
Ս. Եփրեմին աղօթքն եղաւ՝ որ ազատեց
Մծրին քաղաքը քարուքանդ ըլլալէն, եւ
չարաչար պարտութիւն կրելով պարսիկ
բանակը՝ ձգեց ու փախաւ կորակոր: Եր-
բայեւ անգամ ալ (363ին) պաշարուեցաւ
Մծրին, բայց Բիւզանդիոնի թոյլ կայսրը
Յովիանոս՝ պարսիկներուն յանձնեց քա-
ղաքը եւ հաշտութիւն կնքեց: Այդ առթիւ
է որ Ս. Եփրեմ եւ իրեն հետ շատ ասորի
նշանաւոր գրիչներ՝ ձգեցին իրենց հայրե-
նիքը ու Եդեսիա փոխադրուեցան, ուր
հիմնեցին աստուածաբանական բարձր ու-
սումնարան մը՝ Վարժարան Պարսից կոչ-
ուած, ուսկից ելան խումբ մը անուանի
եկեղեցական գրիչներ, որոնք ասորի գրա-
կանութիւնը ծաղկեցուցին: Տասը տարի